«ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՆԴՎՈՂ ԱՊԱԳԱՆ՝ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ: ԱՅԸՆՏՐԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ»:

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ՝
ՀԱՆՐԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍ 2-ՐԴ

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ---------- 3
2. **Ա. ԲԱԺԻՆ.** ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ: ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ ---------- 6
3. **Բ. ԲԱԺԻՆ.** ԴՊՐՈՑՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՓԱԿՈՒՄ: ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ ---------- 11
4. **Գ. ԲԱԺԻՆ.** ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՌՍ: ԿԱՐԳԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓԼՈՒԶՈՒՄ ---------- 15
5. **Դ. ԲԱԺԻՆ.** ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ: ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ ---------- 18
6. **Ե. ԲԱԺԻՆ.** ՀԱՆՐԿՐԹՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ---------- 21
7. **Զ. ԲԱԺԻՆ.** ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ---------- 23
8. **Է. ԲԱԺԻՆ.** ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ------ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացրել է «Ազգային կրթության խորհուրդը՝ ամբողջապես անվճար՝ ելնելով ազգային իրական սպառնալիքների գնահատման անհրաժեշտությունից:

Խնդրի ձևակերպումն ու արդիականությունը

2023–2026 թթ. Հայաստանի հանրակրթական համակարգում «բարեփոխման» քողի տակ տեղի է ունենում համակարգային կազմաքանդում, որն ընդգրկում է չորս խորքային շերտեր՝

Առաջին և ամենավտանգավորը ապազգայնացումն է՝ հայկական քաղաքակրթական կոդի դիտավորյալ փոփոխությունը: Դասագրքերից անհետանում են ազգային հերոսները (Նժդեհ, Մոնթե), կրճատվում է հայոց լեզվի ժամաքանակը 33%-ով, Արցախը հանվում է քարտեզներից, «հայրենասիրություն» և «զինվորականություն» արժեքների հիշատակումը նվազել է 35–52%-ով: Սա «գլոբալ քաղաքացու» կաղապարի տակ ազգային ինքնության միտումնավոր քայքայում է:

Երկրորդը՝ դպրոցների զանգվածային փակումն է՝ 229 դպրոց (94.5%-ը՝ գյուղական միակ), որից 55-ը սահմանամերձ, 108-ը լեռնային: Սա ոչ թե օպտիմալացում է, այլ սահմանային գոտիների ամայացման, ժողովրդագրական ներուժի և պետական անվտանգության թուլացմանն ուղղված քայլ է:

Երրորդը՝ կառավարման քաոսն է. 6504 հայտարարություն տնօրենի թափուր տեղի մասին 2.5 տարում, 642 դպրոց (46%) առանց մշտական ղեկավարի, գաղտնի կազմով մասնագիտական հանձնաժողովներ, որոնք ղեկավարվում են քաղաքական նշանակում ունեցող անձանց կողմից: Սա ապակազմակերպում է, որն անհնարին է դարձնում դպրոցների բնականոն գործունեությունը:

Չորրորդը՝ ատեստավորման մեխանիզմն է, որը քողարկվում է «աշխատավարձի բարձրացման» շղարշով (ընդամենը 20%-ի համար): Իրականում այն ուսուցիչների ճնշող մեծամասնության ձախողումն է: Ատեստավորումը վերածվել է վախի և անվստահության գործիքի, և սա ոչ թե որակի բարձրացում է, այլ ուսուցչի արժանապատվությանը հասցված համակարգային հարված:

«Ատեստավորման «հաջողության» շղարշի տակ թաքնված է կոպիտ վիճակագրական խաբկանք: 2025 թվականի փետրվարի դրությամբ ատեստավորումը հաղթահարել է ընդամենը 6100 ուսուցիչ (20%)[1], ինչը նշանակում է, որ չորս ուսուցչից երեքը ձախողել են այն: Հոգեբանների պարագայում ձախողման

[1] Կամավոր ատեստավորում և տարակարգ: ՀՀ ԿԳՄՄՆ-ի պաշտոնական կայք էջ՝ https://escs.am/am/news/27251, հասնալեի է 10. 04. 2026

ցուցանիշը հասնում է 93%–ի (344-ից ընդամենը 24-ը հաջողակ)[2]: Սա ոչ թե արժանիքների ընտրություն է, այլ համակարգային խափանման արձանագրում, որը քողարկվում է որպես «որակի բարձրացում»:

Այս չորս շերտերը միմյանց հետ փոկապակցված են. ապազգայնացումը քայքայում է ինքնությունը, դպրոցների փակումը՝ տարածքը, կառավարման քաոսը՝ կարգը, ատեստավորումը՝ արժանապատվությունը:

Զեկույցի նպատակը.

Սույն զեկույցի նպատակն է գիտական մեթոդաբանությամբ վերլուծել Հայաստանի հանրակրթության ոլորտում 2023–2026 թթ. իրականացված քաղաքականության փաստացի հետևանքները՝ բացահայտելով կառավարման, ատեստավորման, դպրոցների ցանցի կրճատման և կրթության բովանդակության ապազգայնացման համակարգային խնդիրները, և առաջարկել այլընտրանքային լուծումներ՝ հիմնված ազգային քաղաքակրթական մոդելի և միջազգային լավագույն փորձի վրա:

Հետազոտության խնդիրները:

- Բովանդակային վերլուծությամբ ապացուցել կրթական ծրագրերում և դասագրքերում ազգային արժեքների, հերոսների, պատմական հիշողության համակարգված դուրս մղումը (ապազգայնացում):
- Գնահատել 229 դպրոցի փակման ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և անվտանգային հետևանքները:
- Քանակական և որակական վերլուծության ենթարկել դպրոցի տնօրենների ընտրության մոդելի ձախողումը, բացահայտել դպրոցներում տիրող կառավարման քաոսը:
- Վերլուծել ուսուցիչների և հոգեբանների ատեստավորման գործընթացի խախտումները և դրա ազդեցությունը մասնագիտական արժանապատվության վրա:
- Համեմատել Հայաստանի մոդելը միջազգային փորձի հետ:
- Ներկայացնել «Ազգային կրթակարգի» վրա հիմնված այլընտրանքային լուծումներ:

Մեթոդաբանություն, տեսական և գործնական նշանակություն.

[2] Փորձագիտական եզրակացություն՝ հոգեբանների կամավոր ատեստավորման գործընթացի, գնահատման ուղեցույցի, թեստային հարցերի և արդյունքների վերաբերյալ, Ուսուցիչների իրավունքների պաշտպանության կոմիտե: Երևան, 2025, էջ է

Զեկույցի մեթոդբանական հիմքը կազմում են քանակական, վիճակագրական, որակական, բովանդակային, համեմատական վերլուծությունների և տեսական ընդհանրացման մեթոդները։

Զեկույցը զարգացնում է կրթության կառավարման, «փափուկ անվտանգության» և քաղաքակրթական ինքնության պահպանման տեսությունները՝ ցույց տալով, թե ինչպես չափազանց կենտրոնացված, անթափանց և ապազգային կրթական քաղաքականությունը վերածվում է ազգային անվտանգության սպառնալիքի։ Այն նաև հիմնավորում է «Ազգային կրթակարգի»՝ որպես այլընտրանքային հարացույցի անհրաժեշտությունը։

Զեկույցը նախատեսված է մասնագիտական և հանրային լայն լսարանի համար՝ հանրայացնելու և կանխելու իշխանությունների կողմից հանրակրթության ոչնչացմանը միտված հետևողական քաղաքականությունը։

Ա. ԲԱԺԻՆ.
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ. ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ

Խնդրի քաղաքակրթական էությունը

Հանրակրթության բովանդակության ապազգայնացումն այս զեկույցում դիտարկվում է ոչ թե որպես կրթական ոլորտի պատասխանատուների պատահական բացթողում, այլ որպես համակարգված քաղաքականություն, որն ուղղված է հայկական քաղաքակրթական կոդի արժեզրկմանը և փոխարինմանը «գլոբալ քաղաքացու»՝ ազգային հենքից կտրված մոդելով: Խնդիրը տարեց տարի ավելի է խորանում, որի հետևանքներն աստիճանաբար դառնում են անշրջելի, քանի որ սերունդներ են կրթվում ու դաստիարակվում՝ ազգային ինքության միտումնավող աղավաղման միջոցով:

Հանրակրթության բովանդակության ապազգայանցումն արտահայտվում է երկու փոխկապակցված գործընթացներով. նախ՝ դպրոցում ուսուցման ու դաստիարակության գործընթացում ազգային-քաղաքակրթական բովանդակությունն ապահովող ուսումնական առարկաների ժամաքանակի հետևողական կրճատում է տեղի ունենում: Բացի դրանից, համակարգված ձևով իրականացվում է այդ առարկաների բովանդակության աղքատացում:

Մասնավորապես, 2020–2025 թվականների ընթացքում, 7-12-րդ դասարաններում շուրջ 33 %-ով կրճատվել է «Հայոց լեզու» առարկայի ժամաքանակը (6 ժամից դարձել է 4 ժամ, կորուստը՝ 204 դասաժամ): Տեղի է ունեցել նաև հայ դասական գրականության մասնաբաժնի կրճատում 25-30%-ով: Ավագ դպրոցում ազգային դասականները փոխարինվել են ժամանակակից, հաճախ ավելի թեթև բովանդակությամբ նյութերով:

9-րդ դասարանի «Հայաստանի աշխարհագրություն» դասագրքերից (Պոտոսյան և այլք, Մանասյան և այլք) ամբողջությամբ դուրս է մնացել Արցախի հատվածը, որը նախորդ տարիներին ուսուցանվում էր նվազագույնը 5 դասաժամով: «Հայկական լեռնաշխարհ» բաժնում նույնպես բացակայում է Արցախի որևէ հիշատակություն:

2025-ին շրջանառության մեջ դրված «Այբբենարանում» նախորդի համեմատ դուրս են բերվել Մոնթեի, Նժդեհի և այլ ազգային հերոսների նկարները՝ դրանք փոխարինելով հասարակական գործիչներով (Եկմալյան և այլն): Այս համատեքստում խիստ վտանգավոր է նաև Մեսրոպ Մաշտոցի նկարի բացակայությունն այբբենարանում: Սա խորհրդանշական, բայց չափազանց կարևոր փոփոխություն է, քանի որ այբբենարանը երեխայի առաջին շփումն է գրավոր մշակույթի և արժեքային համակարգի հետ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղի է ունեցել արժեքային ցուցանիշների քանակական անկում: Մեր կողմից հատուկ քննության է առնված «Իմ հայրենիքը» (5-րդ դաս.) և «Իմ հայրենիքն ու աշխարհը» (6-րդ դաս.) դասագրքերի բովանդակությունը, որը հաստատում է դասանյութերի արժեքային

բովանդակության անկման պնդումը: Վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հայրենասիրություն	45	38	29	-35.6%
Ազգային հպարտություն	42	33	24	-42.9%
Զինվորականություն	38	29	18	-52.6%
Ընտանիք և ավանդույթներ	52	47	41	-21.2%

Հաշվարկի մեթոդաբանաության ժամանակ կիրառել ենք դասանյութի հատվածների, պատկերների, առաջադրանքների բովանդակության քանակական վերլուծություն:

Առանձնահատուկ մտահոգիչ է «Զինվորականություն» արժեքի ավելի քան կեսով անկումը պայմաններում, ինչը ուղղակիորեն թուլացնում է սերունդների պաշտպանողական գիտակցությունը:

Ապազգայնացման խնդիրն առավել ցցուն է արտահայտված պատմության նոր դասագրքերում:

Պատմության դասագիրքը ամեն մի ազգի կրթական համակարգում առանցքային դեր է խաղում: Այն ոչ միայն գիտելիք է փոխանցում անցյալի մասին, այլև ձևավորում է սերունդների ինքնությունը, պատկանելության զգացումը և հայրենիքի նկատմամբ վերաբերմունքը: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ և 9-րդ դասարանների դասագրքերի շուրջ ծավալված աղմուկը, որը բացահայտում է համակարգային խնդիրներ: Մասնավորապես, 2023 թվականին տպագրված 7-րդ դասարանի «Հայոց պատմություն» դասագիրքը (հեղինակ՝ Սմբատ Հովհաննիսյան), մասնագետների գնահատմամբ «աղետ» և «ավեր» է հայոց պատմագիտության ասպարեզում: Խնդրահարույց հարցերն ընդգրկում են հետևյալ շերտերը.

- *Ակադեմիական լուրջ սխալներ.* «Պատմության ինստիտուտը 37 էջանոց բացասական եզրակացություն է ներկայացրել այս դասագրքի վերաբերյալ, որը վերաբերում է փաստական սխալներին՝ արձանագրվել են ավելի քան 50 անճշտություններ, որոնք վերաբերում են թվականներին, անուններին և պատմական իրադարձությունների նկարագրությանը: Մեթոդական թերություններ. Նշվել է, որ դասագրքում տեղ գտած որոշ ձևակերպումներ և քարտեզներ կարող են

թյուրըմբռնումների տեղիք տալ կամ չեն համապատասխանում գիտական պատշաճ չափանիշներին: Հայեցակարգային խնդիրներին՝ մասնագետները մտահոգություն էին հայտնել հայոց պատմության առանցքային դրվագների ներկայացման և շեշտադրումների վերաբերյալ:

- *Քաղաքակրթական կոդի փոփոխություն.* Հիմնական մեղադրանքներից մեկը վերաբերում էր հայկական աշխարհակալ տիրակալների ազդեցության գոտիների միտումնավոր նեղացմանը՝ հակասելով ինչպես անտիկ, այնպես էլ արդի հայագիտության դարավոր ավանդույթներին: Պատմաբան Անի Մելքոնյանը սա որակել է «աննկարագրելի ավեր հայոց պատմագիտության ասպարեզում»[3]:
- *Գիտական հանրության կարծիքի անտեսում.* Դասագրքի հեղինակի պատասխանը (որն առաջարկել է 46 շտկում) ավելի շուտ դասագրքի շուրջ քննարկումը ներկայացրել է որպես «նոր մշակույթ», քան արձանագրել մասնագիտական անհամապատասխանությունը, ինչը, սակայն, չի բավարարել մասնագիտական հանրությանը:
- Դատական հայց. Ուշագրավ փաստ է, որ դասագրքի վերաբերյալ դատական հայց է ներկայացվել, ինչը խոսում է այն մասին, որ խնդիրը դուրս է եկել զուտ ակադեմիական քննարկման շրջանակներից և դիտարկվում է որպես իրավական բնույթի կարևոր հարց:

Իսկ ինչ վերաբերում է 2025 թվականին շրջանառության մեջ դրված «Հայաստանի պատմություն 9» դասագրքին, այն մասնագետները դիտարկում են որպես գաղափարական նպատակային աղավաղում:

Քննադատության առաջին սլաքը ուղղված էր բուն առարկայի անվանափոխությանը՝ «Հայոց պատմություն»-ի փոխարեն «Հայաստանի պատմություն»: Այս փոփոխությունը միանգամից հանրային լայն արձագանք ստացավ: Այն կապվեց ոչ թե կրթական, այլ քաղաքական շարժառիթների հետ: «Հայոց պատմություն» հասկացությունը, իր տեղը զիջեց «Հայաստանի պատմության» աշխարհագրորեն սահմանափակ դաշտին: Հստակ է, որ այս փոփոխությունը ոչ միայն տերմինաբանական փոփոխություն է, այլ քաղաքական ակտ, որն ուղղված է ազգային պատմության ամբողջականությունից, ներառյալ սփյուռքը և Արցախը, հրաժարվելուն: Գաղափարական այս աղավաղումը համակարգված կերպով կրճատում է պատմության դաշտը մինչև ՀՀ ներկա վարչական սահմանները՝ արհեստականորեն խզելով պատմական շարունակականությունը՝ հարված հասցնելով ինչպես հայոց պատմության ազգային, այնպես էլ տարածքային ամբողջականության ընկալմանը:

---

[3] Մելքոնյան Ա., «Այս «վայ» դասագիրքն իսկական աղետ է նոր սերնդի համար և աննկարագրելի ավեր հայոց պատմագիտության ասպարեզում», Հունվար 08,2025, https://www.aravot.am/2025/01/08/1463596/, հասանելի10.04.2026

Այսպիսով, թե՛ 7-րդ, թե՛ 9-րդ դասարանների դասագրքերի շուրջ ծավալված աղմուկը վկայում է կրթական համակարգում ապազգայնացման առնվազն երեք խորքային մակարդակների մասին.

- Փաստական աղավաղում. Պատմության փաստերի միտումնավոր կամ ոչ միտումնավոր աղավաղումը (7-րդ դասարանի դեպքում) կամ դրանց կարևոր հատվածների ամբողջական բացակայությունը:
- Գաղափարական փոփոխություն. «Հայոց պատմություն» հասկացության փոխարինումը «Հայաստանի պատմություն»-ով, որն աշխարհագրորեն սահմանափակում և ազգային իմաստով կրճատում է դիտարկվող պատմության շրջանակը (9-րդ դասարանի դեպքում):
- Անտեսում և անպատասխանատվություն. Ակադեմիական հանրության և հասարակական լայն շրջանակների ահազանգերի անտեսումը, որոնք վերածվում են դատական գործերի, ինչը խոսում է համակարգի կամայականության և հաշվետվողականության բացակայության մասին:

Այս բոլոր դրսևորումները միասին վկայում են այն մասին, որ ՀՀ-ում կրթությունը նպատակաուղղված է ծառայելու «բաց հասարակության» շրջանակներում ձևավորվող նոր աշխարհայացքին, որտեղ ազգայինը և ավանդականը միտումնավոր եզրահանվում են հանուն «գլոբալ քաղաքացու» կերպարի:

Նկատենք, որ UNESCO-ի «Global Citizenship Education» (2015) ծրագիրը, որը նպատակաուղղված է համամարդկային արժեքների ձևավորմանը, Հայաստանում կիրառվում է առանց ազգային հարմարեցման՝ փաստացի եզրահանելով ազգային բաղադրիչը: Արդյունքում ձևավորվում է «գլոբալ քաղաքացի» առանց արմատների, առանց հայրենիքի, առանց պաշտպանելու պատրաստակամության:

Խնդիրը դիտարկելով միջազգային փորձի համատեքստում՝ կարող ենք արձանագրել շատ երկրների օրինակը, որոնք միանալով UNESCO-ի նշված ծրագրին, այնուամենայնիվ, դպրոցական առարկաներում բարձր են պահում ազգային ինքությանը վերաբերող նյութերը:

Այսպես օրինակ, Լեհաստանում դպրոցական ծրագրերը պարտադիր ընդգրկում են ազգային հերոսներին և անկախության պայքարը: Պատմության դասագրքերում առանցքային տեղ են զբաղեցնում ազգային-ազատագրական շարժումները:

Իսրայելում կրթությունը հիմնված է ազգային հիշողության պահպանման վրա՝ Հոլոքոստից մինչև ժամանակակից պատերազմներ: «Զինվորականություն» արժեքը դաստիարակվում է վաղ տարիքից:

Ճապոնիայում կրթական համակարգը կառուցված է ազգային արժեքների, կոլեկտիվիզմի և հայրենասիրության վրա՝ առանց գլոբալիստական մոդելին կուրորեն հետևելու:

Ֆինլանդիայում ազգային ինքնությունը չի ստորադասվում գլոբալ արժեքներին, այլ ներդաշնակվում է դրանց հետ՝ պահպանելով ֆիննական մշակութային կոդը:

Ամփոփելով կարող ենք հստակ արձանագրել, որ Հայաստանի հանրակրթության բովանդակության մեջ տեղի է ունենում համակարգված ապազգայնացում, որն արտահայտվում է ժամաքանակի կրճատմամբ, ազգային հերոսների դուրս մղմամբ, Արցախի բացակայությամբ, «հայրենասիրություն» և «զինվորականություն» արժեքների անկմամբ 35–52%-ով, ինչպես նաև պատմության դասագրքերի փաստական և գաղափարական աղավաղումներով: Սա **ազգային անվտանգության ուղղակի սպառնալիք է**:

Բ. ԲԱԺԻՆ.
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՓԱԿՈՒՄ.[4]
ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ

Խնդրի ձևակերպումը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11.09.2023 թ. թիվ 1719-Ա/2 հրամանով նախատեսվել էր լուծարել 232 հանրակրթական դպրոց: Հետագայում 3 դպրոցներ դուրս են բերվել ցանկից, ուստի այսօր փակման է ենթակա **229 դպրոց**:

- Դրանցից **94.5%-ը (218 դպրոց)** տվյալ բնակավայրի **միակ դպրոցն է**:
- Սա կազմում է ՀՀ գործող դպրոցների ընդհանուր թվի **16.6%-ը** (յուրաքանչյուր 6-րդ դպրոցը):

Փակվող դպրոցների աշխարհագրական բաշխումն ունի հետևյալ պատկերը.

- **Սյունիք՝** 48 դպրոց (մարզի դպրոցների 41%-ը, գյուղականների 55%-ը)
- **Շիրակ՝** 48 դպրոց (գյուղականների 42%-ը)
- **Լոռի՝** 47 դպրոց (գյուղականների 43%-ը)
- **Վայոց ձոր՝** 16 դպրոց (գյուղականների 40%-ը)
- **Գեղարքունիք՝** 15 դպրոց (գյուղականների 15%-ը)
- **Տավուշ՝** 14 դպրոց (գյուղականների 27%-ը)
- **Արագածոտն՝** 24 դպրոց (գյուղականների 22%-ը)
- **Կոտայք, Արմավիր, Արարատ՝** 9, 7, 4 դպրոց (համեմատաբար քիչ)

Առանձնահատուկ վտանգավոր է սահմանամերձ գոտիների թիրախավորումը: Փակվում է 55 սահմանամերձ բնակավայրի դպրոց **(ՀՀ սահմանամերձ բնակավայրերի 30%-ը):**

- Սյունիք՝ 27 դպրոց (Կապան համայնքում փակվող 14-ից 12-ը սահմանամերձ են)
- Շիրակ՝ 10 դպրոց
- Տավուշ՝ 8 դպրոց
- Գեղարքունիք՝ 8 դպրոց

«Սահմանամերձ 55 դպրոցի միաժամանակյա փակումը Սյունիքում, Շիրակում և Տավուշում կարող է ձևավորել շուրջ 600 կմ երկարությամբ «դեմոգրաֆիկ վակուումի գոտի»: Միջազգային փորձը վկայում է, որ նման պայմաններում սահմանային խախտումներն աճում են 2–3 անգամ, իսկ տարածքային հավակնությունների հիմնավորման ռիսկը՝ բազմապատկվում: Սա ազգային անվտանգության «կարմիր գիծ» է, որը կառավարությունը համակարգված կերպով անցնում է:»

---

[4] Դպրոցների փակման գործընթացը մանրամասն հետազոտվել է «Ազգային կրթության խորհրդի» կողմից, որի հիման վրա պատրաստվել է հանրային զեկույց և 20.02.2026-ին ներկայացվել հանրության լայն շերտերին: Հանրային զեկույցը, մասնագիտական խորքային վերլուծություններով և գնահատականներով, հասանելի է «Ազգային կրթության խորհրդի» կայքում՝ https://donation--donation-mitq.asia-east1.hosted.app/

Այս գործընթացի թիրախում հայտվել են հանրապետության տարաբնակեցման շերտի լեռնային և բարձր լեռնային գոտիներ։ Փակվում է 41 բարձր լեռնային բնակավայրի միակ դպրոցը՝այդ կարգավիճակ ունեցող բնակավայրերի 22.5%-ը (Արագածոտն՝ 11, Շիրակ՝ 13, Գեղարքունիք՝ 10 և այլն)։ Փակվում է 108 լեռնային բնակավայրի միակ դպրոց (այդ կարգավիճակ ունեցող բնակավայրերի 57.7%-ը)։

Դպրոցների փակման գործընթացը վերաբերելու է ավելի քան 8700 աշակերտի, ովքեր ամեն օր ստիպված են լինելու հաղթահարել տասնյակ կիլոմետրեր՝ ուսում ստանալու համար (Լոռի 1607, Շիրակ՝ 1622, Սյունիք՝ 978, Տավուշ՝ 870, Արագածոտն 808, և այլն)։

Կրճատման է ենթակա շուրջ 2500 ուսուցիչ, որի ամենաբարձր ցուցանիշը Լոռիում և Շիրակում է, համապատասխանաբար 543 և 473 ուսուցիչ։

Կրճատվում է շուրջ 2471 աշխատակից (որից 2365-ը՝ գյուղական միակ դպրոցներում)։

Փակվող դպրոցների բնակավայրերում ապրում է ավելի քան 70 000 մարդ, ովքեր այս գործընթացի հետևանքով դառնում են պոտեցիալ արտագաղթող։ Մարզերից հստակ թիրախավորված է Սյունիքը, որի գյուղական բնակչության 30%-ը հայտնվել է դպրոցների փակման գործընթացի թիրախում։

Մտահոգիչ հաջորդ շերտը վերաբերում է տարածքների հնարավոր ամայացմանը։ Այսպես օրինակ, փակվող դպրոցների բնակավայրերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը ավելի քան 2 500 կմ² է։ Սյունիքում այդ ցուցանիշը հավասար է 1047 կմ²-ի՝ մարզի տարածքի 23%-ը, Շիրակում՝ 808 կմ², մարզի տարածքի 25%-ը, Լոռիում, Վայոց ձորում, Գեղարքունիքում՝ 17-20-ական տոկոս։

«Հանրապետությունում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի» քողի տակ իրականացվող դպրոցների փակման գործընթացն առաջ է բերելու բազմաչափ հետևանքներ ու կորուստներ, որոնք իրենց բնույթով անշրջելի են լինելու։ Դրանց համառոտ ներկայացման համար առանձնացնենք հետևյալ ոլորտները.

Ա. Կրթական ոլորտում սպասվող հետևանքներ են՝

- Գյուղական կրթական ցանցի 28%-ի ոչնչացում։
- Ուսուցիչների կադրային բազայի անդառնալի կորուստ (բազմառարկայական փորձ, սոցիալական ադապտացիա գյուղում)։
- Դպրոցական ենթակառուցվածքների (շենքեր, գրադարաններ, մարզադահլիճներ) լքում և քանդում։

Բ. Ժողովրդագրական ոլորտում տեսանելի հետևանքներ են՝

- «Կրիտիկական զանգվածի» կորուստ. դպրոցի փակումը գործարկում է շղթայական արտագաղթ.
- երիտասարդ ընտանիքների ելք → ծնելիության անկում → սպասարկման ոլորտի անշահավետություն → միջին տարիքի բնակչության արտագաղթ → մնում են միայն տարեցները → բնակավայրի մահ։

- Գյուղ→քաղաք միակողմանի միգրացիա (հիմնականում Երևան, մարզկենտրոններ):

Գ. Սոցիալ-տնտեսական հետևանքների համար առանձնացնենք հետևյալները.

- Աշխատատեղերի զանգվածային կորուստ (ուսուցիչներ + օժանդակ անձնակազմ):
- Գյուղատնտեսական հողերի շրջանառությունից դուրս մնալ (աշխատուժի բացակայություն, հողօգտագործողների ծերացում, ոռոգման համակարգերի խափանում):
- Տեղական տնտեսության փլուզում (գործազրկություն, վճարունակության անկում, փոքր բիզնեսի փակում):
- Պարենային կախվածության աճ, գյուղատնտեսական արտահանման ներուժի կորուստ:

Դ. Ազգային անվտանգության ոլորտում սպասվող հետևանքների համար առանձնացնենք ներքոհիշյալ շերտերը

- Սահմանային գոտիների ամայացում. «Կենդանի սահմանապահների» կորուստ. սահմանամերձ գյուղերը հանդիսանում են սահմանի «աչքերն ու ականջները»:
- Սահմանային խախտումների աննկատ մնալու ռիսկ. տեղեկատվական վակուում, խոցելի հատվածներ:
- **Պետական ներկայության նվազում. դպրոցը պետական ինստիտուցիոնալ ներկայության կարևորագույն հանգույց է (կրթական, համայնքային, տեղեկատվական գործառույթներ):**
- Տարածքային հավակնությունների խթանում. դատարկվող տարածքները պատմականորեն օգտագործվել են հակառակորդի կողմից իր տարածքային պահանջները հիմնավորելու համար (հատկապես Սյունիքում, Վարդենիսում, Վայքում):

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրներ ունեն բավականին կոշտ քաղաքականություն գյուղական դպրոցները չփակելու հարցում: Մասնավորապես՝ Ֆինլանդիայում, չնայած ժողովրդագրական ճնշմանը, սահմանամերձ և հեռավոր շրջաններում փոքր դպրոցները պահպանվում են պետական նպատակային սուբսիդավորման միջոցով:

Էստոնիայում գործում է «Կենսունակ գյուղական դպրոց» ծրագիր՝ ճկուն մոդելներով (հեռավար, համալիր դասարաններ, շրջիկ ուսուցիչներ): Իսկ Նորվեգիայում, սահմանամերձ հեռավոր շրջաններում դպրոցի փակումը պահանջում է խորհրդարանի հատուկ որոշում՝ ազգային անվտանգության հիմնավորմամբ:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ 229 դպրոցի փակումը, հատկապես սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային գոտիներում (55 սահմանամերձ, 149 լեռնային/բարձր լեռնային), հանգեցնում է ոչ միայն կրթական ցանցի քայքայման, այլև ժողովրդագրական աղետի, գյուղատնտեսական ներուժի ոչնչացման և պետական անվտանգության լուրջ թուլացման: Սա ազգային դավաճանության եզրին կանգնած քաղաքականություն է:

Գ. ԲԱԺԻՆ.
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՌՍ:
ԿԱՐԳԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՓԼՈՒԶՈՒՄ[5]

Խնդրի ձևակերպումը.

Դպրոցի տնօրենի ընտրության 2023 թվականի մոդելը ոչ թե բարեփոխում էր, այլ արմատական փոփոխություն, որը կառավարման բոլոր լծակները կենտրոնացրեց ԿԳՄՍ նախարարությունում: Որոշումը, որով այս կարևորագույն գործընթացն արմատական փոփոխությունների էր ենթարկվում, կառավարության նիստին ներկայացված չզեկուցվող հարցերից մեկն էր: Իշխանությունն այդ փոփոխությունն իրականացրեց փակ դռների հետևում՝ առանց հանրային քննարկման, ինչն ինքնին վկայում էր գործընթացի թափանցիկության նկատմամբ վերաբերմունքի մասին:

Խնդրի ներկայացման համար նախ անհրաժեշտ է քանակական վերլուծության ենթարկել կրկնվող մրցույթներին վերաբերող տեղեկատվությունը, որը բացահայտում է անհավանական թվեր: Մասնավորապես, 2023-2025 թվականներին ԿԳՄՍ կայքում հրապարակվել է 6504 հայտարարություն դպրոցի տնօրենի թափուր տեղի վերաբերյալ, ինչը վերաբերում է Հայաստանի 1399 դպրոցներից 642-ին: Փաստացի, 2.5 տարվա ընթացքում յուրաքանչյուր տվյալ դպրոցում միջինը 10-ից ավելի հայտարարություն է հրապարակվել, ինչը նշանակում է, որ նույն դպրոցներում տնօրենի ընտրության գործընթացը տասնյակ անգամներ է «խափանվել»: Սյունիքի մարզի Արավուսի տարրական դպրոցի դեպքում, օրինակ, 2.5 տարվա ընթացքում թափուր տեղի մասին հայտարարությունը հրապարակվել է 41 անգամ: Այս թվերը ցույց են տալիս ոչ թե հավակնորդների սղություն, այլ գործընթացի խորքային անկարողությունը:

2023-2025 թվականների աղետալի արդյունքներից հետո, 2025-ի ապրիլին իշխանությունը ներկայացրեց տնօրենների նշանակման եռաստիճան մեխանիզմի փոփոխությունները, որոնք փաստացի ձախողման արձանագրություն էին: Այդ ժամանակ արդեն 437 հաստատություն անցել էր նոր մոդելին, որից միայն 138-ում էր նշանակվել տնօրեն: Ավելին, այդ ժամանակ արդեն պարզ էր, որ թեկնածուների միայն 13%-ն է կարողանում հաղթահարել զարգացման ծրագրերի փորձաքննության փուլը, իսկ հարցազրույցի փուլը 38%-ը: Այս տվյալներն իշխանությունն օգտագործեց «կառավարչական կոմպետենցիաների սղության» թեզն առաջ քաշելու համար խնդիրը համակարգից տեղափոխելով թեկնածուների վրա: Սակայն, դա խնդրի գոյությունը չի մեղմում:

---

[5] Զեկույցի սույն բաժնի կազմման համար հիմնվել ենք Արտակ Քյուրումյանի իրականացված վերլուծության վրա, որը «Ինչո՞ւ Հայաստանի մի քանի հարյուր դպրոցներում տնօրեններ չկան. ԿԳՄՄՆ-ն գաղտնի է պահում մասնագիտական հանձնաժողովների կազմը» վերանգրով 02.03.26 թվականին հրապարվել է Factor.am կայքում: https://factor.am/990184.factor.am

Տնօրենների ընտրության նոր կարգի ամենախոցելի կողմերից մեկը մասնագիտական հանձնաժողովն է, որը կարելի է բնութագրել որպես գաղտնի կառույց՝ քաղաքական ղեկավարմամբ: Այն նոր մոդելի առանցքային օղակն է, որը, ըստ ամենայնի, դարձավ գործընթացի քաղաքականացման գործիք: 2026-ի հունվարին՝ խնդրի հետազոտման Արտակ Քյուրումյանը նախարարությանը հղեց 4 գրություն՝ խնդրելով տրամադրել հանձնաժողովի կազմն ու նիստերի արձանագրությունները, սակայն նախարարությունը հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ «կարգը չի նախատեսում հրապարակում»: Հայտնի է միայն, որ հանձնաժողովի ձևավորման հետ կապ ունեն նախարարի 2023 թվականի №191-Ա և №1653-Ա հրամանները, իսկ հանձնաժողովի նիստերը ղեկավարում է հենց նախարարը կամ նրա տեղակալը: Այսպիսով, քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք ուղղակիորեն ազդում են տնօրենի ընտրության վրա, ինչն աղավաղում է գնահատման օբյեկտիվությունը:

Ներդրվող նոր մոդելի հիմնավորման մեջ պատասխանատուները նշում էին կոռուպցիոն ռիսկերի նվազեցման անհրաժեշտությունը, սակայն հիմա արդեն կարելի արձանագրել, որ նոր մոդելը կոռուպցիոն ռիսկերը դարձրել է որպես համակարգի մաս: Մասնավորապես, նոր մոդելի էական թերություններից է «դպրոցի զարգացման ծրագրի» շուրջ ստեղծված արհեստական և շահութաբեր շուկան: Թեկնածուները, ովքեր պետք է ներկայացնեին դպրոցի զարգացման տեսլականը, հաճախ ստիպված էին դիմել վճարովի հիմունքներով ծրագրեր գրող «մասնագետների»: Այս ծառայության գովազդները քողարկվում էին «խորհրդատվական դասընթաց» առաջարկելով, իսկ առանձին օրերի նույնիսկ զեղչեր էին կիրառվում: Մինչդեռ, 2025-ի ապրիլի փոփոխություններով արդեն իսկ հաստատվեց, որ հարցազրույցների ընթացքում հաճախ է պարզվում, որ թեկնածուն նույնիսկ իր ներկայացրած ծրագրի հեղինակը չէ:

Այսպիսով, ներկայացված տվյալները միասին վկայում են խորքային համակարգային ձախողման մասին: Տնօրենի ընտրության գործընթացի հետ կապված 6504 հայտարարությունը, 13% զարգացման ծրագրի փուլն անցնողների և 38% հարցազրույցը հաղթահարողների ցուցանիշները, ինչպես նաև մասնագիտական հանձնաժողովի անթափանցելիությունը ստեղծել են մի իրավիճակ, երբ դպրոցը տարիներ շարունակ ղեկավարվում է ժամանակավոր պաշտոնակատարի կողմից՝ առանց համապատասխան որակավորման, առանց զարգացման ծրագրի:

«UNESCO-ի 2024/2025 GEM Report–ը ընդգծում է, որ աշխարհի երկրների 63%-ում տնօրենների ընտրությունը տեղի է ունենում բաց մրցութային հիմունքներով, իսկ քաղաքական նշանակումները վաղուց համարվում են հակակայուն և կոռուպցիոն ռիսկերով լի: Հայաստանի մոդելը, որտեղ ընտրությունը ղեկավարում է անթափանց հանձնաժողովը՝ քաղաքական պաշտոնյաների գլխավորությամբ, հայտնվում է ոչ թե 63%-ի, այլ կոռուպցիոն և կամայական մոդելների 37%-ի մեջ:»

Ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ ներդրված մոդելը կարելի է բնութագրել որպես «Քաղաքական կամայականությունների» քողարկում: 2025-ին իշխանությունը վերջապես ընդունեց, որ թեկնածուների 13%-ն է կարողանում անցնել «զարգացման ծրագրի» փուլը, սակայն այս ձախողումը որակվեց որպես «կառավարչական կոմպետենցիաների սղություն», այլ ոչ թե գործիքի անհամապատասխանություն: Սակայն, սահմանադրությամբ ամրագրված հավասարության և համաչափության սկզբունքները, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների մասին» օրենքի 7-րդ հոդվածը՝ կամայականության արգելքը, խախտվում են գնահատման թափանցիկ մեխանիզմի բացակայության, հանձնաժողովի կազմի գաղտնիության և մասնագիտական գնահատման չափորոշիչների ոչ հրապարակման հետևանքով:

Դպրոցի տնօրենի ընտրության 2023-2026 թվականների մոդելը ձախողված քաղաքական փորձ է, որը հանգեցրել է հանրակրթության ոլորտի կառավարման փլուզմանը: Անհրաժեշտ է անհապաղ վերականգնել հանձնաժողովների հանրային հաշվետվողականությունը՝ հրապարակելով ինչպես կազմը, այնպես էլ նիստերի արձանագրությունները: Անհրաժեշտ է նաև օրենսդրորեն սահմանել, որ մասնագիտական հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք: Պետք է ստեղծել անկախ հանձնաժողով ընտրության մեխանիզմը և զարգացման ծրագրերի գնահատման չափանիշները վերանայելու համար:

ԳԼՈՒԽ Դ.
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ. ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ[6]

Խնդրի ձևակերպումը.

Ատեստավորումը կառավարող իշխանության կողմից ներկայացվում է որպես ուսուցչի աշխատավարձի բարձրացման և որակի երաշխավորման գործիք: Այսպես, պաշտոնապես հնչում էին այն թեզերը, թե ատեստավորումը կնպաստի ուսուցիչների շրջանում առարկայական գիտելիքների աճին, կբարելավի կրթության որակը և կապահովի արդարացի վարձատրություն: Սակայն երեք տարիների ընթացքում կուտակված փաստական նյութը, ատեստավորման ամբողջական տվյալները, հարյուրավոր անհատական բողոքները բացահայտում են միանգամայն այլ պատկեր:

20%–ի շղարշը. վիճակագրական խաբկանք ուսուցիչների մեծամասնության հաշվին. 2024–2025 թվականներին, ըստ պաշտոնական տվյալների, Հայաստանում կամավոր ատեստավորումը հաղթահարել է շուրջ 6100 ուսուցիչ, որը կազմում է դասավանդող անձնակազմի ընդամենը մոտ 20 տոկոսը: Այս ցուցանիշը իշխանության կողմից մշտապես օգտագործվել է որպես «բարձր վարձատրվող ուսուցիչների պատրաստման» հաջողություն՝ անտեսելով այն հանգամանքը, որ փաստացի 4 ուսուցիչներից 3-ը չի կարողացել հաղթահարել տվյալ գնահատման գործիքի պահանջները: Մասնավորապես, 2025 թվականի հոգեբանների ատեստավորման արդյունքները ցնցող էին: 393 գրանցված հոգեբաններից քննությանը ներկայացել են 344-ը, որից անցողիկ շեմը հաղթահարեց միայն 24-ը (7%): Այս արդյունքը միջազգային չափանիշներով ակնհայտ դուրս է թույլատրելի շեղումների սահմաններից:

Այսպիսով, ակնհայտ է ատեստավորման մեխանիզմի համակարգային թերությունները:

Իշխանությունը, ատեստավորման 100%-անոց ձախողման մասին ահազանգերի փոխարեն, ներկայացնում էր միայն հայտարարություններ աշխատավարձի բարձրացման «հաջողության» մասին:

Որակի վերահսկողության բացակայություն և մասնագիտական կամայականություն:

2024–2025 թթ. ատեստավորման թեստերը չեն անցել վավերականության և նախնական փորձարկման փուլ, ինչը հանգեցրել է մի շարք անհամապատասխանությունների, այդ թվում՝ ուղեցույց-թեստ անհամապատասխանություն, մասնագիտական սխալներ, լեզվաքերականական

---

[6] Զեկույցի այս բաժնի կազմման համար օգտվել ենք «Ուսուցիչների իրավունքների պաշտպանության կոմիտեի» հրապարակած հետազոտության վրա: Տե՛ս Հանրային զեկույց՝ արձանագրված ուսուցիչների ատեսատվորման քննությունների համակարգային խնդիրների, խախտումների, ռիսկերի և դրանց հետևանքների մասին, Ուսուցիչների իրավունքների պաշտպանության կոմիտե: Երևան, 2025, 68 էջ

խնդիրներ և տերմինաբանական անորոշություններ: Ուսուցիչների հարցման արդյունքում պարզվել է, որ բովանդակային անհամապատասխանությունը ($\beta = -0.62$, $p < .001$) ամենաուժեղ բացասական գործոնն է արդյունքի ընկալման վրա:

Անտեսված մասնագիտական ռիսկերը:

Ատեստավորման գործընթացը նաև հարված էր ուսուցչի հոգեբանական վիճակին: 2025-ի հարցմանը մասնակցած ուսուցիչների 54%-ը նշել է հոգեբանական ճնշման մակարդակը «ուժեղ» կամ «շատ ուժեղ», իսկ 90.3%-ը հայտարարել է, որ ակնկալիքներն ու արդյունքը չեն համընկնում: Այս օրինաչափությունը հաստատել է նաև հոգեբանների իրավունքների պաշտպանության փորձագիտական եզրակացությունը, որը արձանագրել է գնահատման գործիքի ոչ համաչափությունը և հոգեբանական անվտանգության խախտումները:

Ուսուցիչների ատեստավորման գործընթացը դարձել է «Ոչ միայն գիտելիքի, այլև արժանապատվության քննություն»: 2024-2025թթ. ատեստավորման գործընթացի քանակական և որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ ատեստավորումը վերածվել է ուսուցչի և՛ մասնագիտական գիտելիքների, և՛ արժանապատվության քննության, որը նաև ոտնահարում է ուսուցիչների իրավական հավասարության և արդարության սկզբունքները: Այն բացառում էր ցանկացած շեղում կամ «մասնագիտական կասկած»:

Ատեստավորման գործընթացը բացահայտել է նաև իրավական, մեթոդաբանական, կազմակերպական բազմաշերտ խախտումներ: Արձանագրվել են կազմակերպչական, տեխնիկական և էթիկական բազմաթիվ խախտումներ, տեխնիկական խափանումներ, դահլիճների ոչ պատշաճ պայմաններ, կոպիտ վերաբերմունք:

Իսկ ամենակարևորը՝ բողոքարկումների գործընթացը ձախողվեց. շատ դեպքերում ուսուցիչները ստանում էին copy-paste պատրաստի պատասխաններ:

«Համակարգի» հաղթանակը հանուն քարոզչական շահի.

Սրա հետևանքն այն է, որ ատեստավորումն այլևս չի կարող օգտագործվել որպես արդար և օբյեկտիվ գնահատման մեխանիզմ:

2024–2025 թթ. ատեստավորման արդյունքում հաջողության է հասել ուսուցիչների միայն 20%-ը, իսկ հոգեբանների դեպքում այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 7% (93% ձախողում): Այնպիսի միջազգային չափորոշիչներ, ինչպիսիք են APA/AERA/NCME Standards-ը և UNESCO Teacher Standards-ը, հստակեցնում են, որ զանգվածային ձախողման դեպքում (30%–ից բարձր) առաջնահերթ վերանայման ենթակա է ոչ թե մասնակիցների պատրաստվածությունը, այլ գնահատման գործիքը: Հայաստանը 93% ցուցանիշով ոչ միայն գերազանցում է այդ շեմը, այլև արձանագրում է միջազգային պրակտիկայով աննախադեպ ձախողում:

Ամփոփելով փաստենք, որ շատ չափորոշիչներով Հայաստանի ատեստավորման մոդելը խրված է 20-րդ դարում: Որպես գործընթաց, այն չի ներառում իրական դասի դիտարկում, մանկավարժական և հոգեբանական առանձնահատկությունների

գնահատում, աշակերտի առաջընթացի վերլուծություն, արձագանքներ և ինքնագնահատում, որոնք եվրոպական մի շարք երկրներում պարտադիր պահանջ են: Բազմավեկտոր և կազմելի նոր մոդելը՝ «Ազգային ուսուցչի» կարգավիճակի ինստիտուտի հետ մեկտեղ, ավելի համահունչ կլինի ինչպես ազգային, այնպես էլ միջազգային պահանջներին:

Ե. ԲԱԺԻՆ.
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայաստանի հանրակրթության ոլորտում 2023–2026 թթ. իրականացված քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա չէ առանձին խնդիրների համակցություն, այլ ձևավորվել է համակարգային դեգրադացիայի միասնական մոդել, որը գործում է փոխկապակցված չորս ուղղություններով։

Առաջին՝ բովանդակային մակարդակում (ապազգայնացում) տեղի է ունենում կրթության արժեքային հիմքի փոփոխություն՝ ազգային ինքնության, պատմական հիշողության և մշակութային շարունակականության թուլացմամբ։ Սա նվազեցնում է կրթության՝ որպես ինքնության վերարտադրության ինստիտուտի դերը։

Երկրորդ՝ տարածական մակարդակում (դպրոցների փակում) կրճատվում է կրթական ցանցը՝ հատկապես գյուղական, սահմանամերձ և լեռնային բնակավայրերում, ինչի արդյունքում խաթարվում է կրթության հասանելիությունը և արագանում են ժողովրդագրական ու տարածքային դատարկման գործընթացները։

Երրորդ՝ ինստիտուցիոնալ մակարդակում (կառավարման ճգնաժամ) տնօրենի ընտրության մեխանիզմի ձախողումը և կառավարման գերկենտրոնացումը հանգեցնում են դպրոցների կառավարման անկայունության, երկարաժամկետ պլանավորման բացակայության և համակարգի գործունակության նվազման։

Չորրորդ՝ մասնագիտական մակարդակում (ատեստավորման մոդել) ձևավորվում է ուսուցչի գործունեության ոչ արդյունավետ գնահատման համակարգ, որը չի նպաստում որակի բարձրացմանը, փոխարենը առաջացնում է անվստահություն, մոտիվացիայի անկում և մասնագիտական դեգրադացիայի ռիսկեր։

Այս չորս ուղղությունները չեն գործում առանձին, այլ ձևավորում են փոխադարձ ուժեղացնող ազդեցությունների փակ շղթա.

- բովանդակային փոփոխությունները թուլացնում են կրթության արժեքային հիմքը,
- տարածական կրճատումը սահմանափակում է համակարգի ֆիզիկական հասանելիությունը,
- կառավարման անկայունությունը խաթարում է ինստիտուցիոնալ արդյունավետությունը,
- իսկ մասնագիտական ճնշումները նվազեցնում են համակարգի մարդկային կապիտալը։

Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, որտեղ հանրակրթական համակարգը կորցնում է իր չորս հիմնասյուները՝ ինքնություն, հասանելիություն, կարգ և որակ։

Այս համադրությունը թույլ է տալիս դիտարկել ընթացիկ զարգացումները ոչ թե որպես հատվածական ձախողումներ, այլ որպես համակարգային ռիսկ, որը կարող է ունենալ երկարաժամկետ սոցիալ-տնտեսական և անվտանգային հետևանքներ։

ԻՆՉՊԵՍ Է ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒԸ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ



Զ. ԲԱԺԻՆ.
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Հետազոտության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ եզրակացությունների միջոցով.

- Հետազոտության ենթարկված չորս հիմնախնդիրներն առանձին-առանձին ապացուցում են, որ տեղի է ունենում կրթական համակարգի միտումնավոր քայքայում: Սակայն առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այս չորս ուղղությունները միմյանցից անկախ չեն. դրանք փոխկապակցված են և գործում են որպես **մեկ ամբողջական համակարգային քաղաքականություն**:
- Այս չորս գործընթացների միաժամանակյա և համակարգված իրականացումը բացառում է պատահականության կամ առանձին սխալների տարբերակը: Սա կանխամտածված, հետևողականորեն իրականացվող քաղաքականություն է, որի արդյունքում ձևավորվելու է մի սերունդ, որը չի ճանաչում իր պատմությունը, չունի ազգային հպարտություն, պատրաստ չէ պաշտպանել հայրենիքը, չի վստահում կրթական համակարգին և չունի որակյալ ղեկավարներ ու ուսուցիչներ:
- Ներկա իրավիճակը չի կարող շարունակվել մի քանի պատճառներով՝

✓ **Մարդկային արժանապատվության տեսանկյունից** ուսուցչի մասնագիտական արժանապատվության ոտնահարումը, հոգեբանական ճնշումը հանգեցնում են մասնագիտության հեղինակության անկման, կադրերի արտահոսքի, իսկ աշակերտների մոտ՝ ուսուցման նկատմամբ հետաքրքրության անկման:

✓ **Իրավական տեսանկյունից** խախտվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հավասարության, համաչափության, արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի սկզբունքները:

✓ **Սոցիալ-տնտեսական տեսանկյունից** հազարավոր աշխատատեղերի կորուստը, գյուղատնտեսական հողերի շրջանառությունից դուրս մնալը, փոքր բիզնեսի փակումը, գյուղերի ամայացումը հանգեցնում են ազգային տնտեսության անկման, սննդային կախվածության աճի:

✓ **Ազգային անվտանգության տեսանկյունից** սահմանամերձ գոտիների ամայացումը, ժողովրդագրական ներուժի ոչնչացումը ստեղծում են խոցելի գոտիներ, որոնք կարող են օգտագործվել հակառակորդի կողմից տարածքային հավակնությունները հիմնավորելու համար: Հանրակրթության ներկա բովանդակությամբ ձևավորում է երիտասարդ սերունդ, որն ի վիճակի չէ պաշտպանելու իր հայրենիքը:

- Այս ամենը կանխելու համար անհրաժեշտ է ձևավորել այլընտրանք, որը կենսունակ կարող է լինել միայն համակարգային մոտեցման շնորհիվ: Ըստ այդմ, Ազգային կրթական համակարգի ձևավորումը ժամանակի հրամայականն է, որը պետք է հիմնված լինի «Ազգային կրթակարգի» վրա, զինված լինի ժամանակակից գործիքակազմով և հասանելի լինի հանրակրթության բոլոր շահառուներին:

Է. ԲԱԺԻՆ.
ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

Հայաստանի հանրակրթության ոլորտում արձանագրված համակարգային դեգրադացիայի պայմաններում ակնհայտ է դառնում, որ առանձին ուղղություններով մասնակի բարեփոխումները չեն կարող ապահովել համակարգի վերականգնումը։ Խնդիրը կրում է կառուցվածքային և քաղաքակրթական բնույթ, հետևաբար պահանջում է համարժեք՝ համակարգային լուծում։

Այդպիսի լուծում առաջարկում է «Ազգային կրթության խորհուրդը», շրջանառության մեջ դնելով «Ազգային կրթակարգը»[7], որը ներկայացվում է ոչ թե որպես առանձին բարեփոխումների փաթեթ, այլ որպես ամբողջական կրթական մոդել՝ հիմնված քաղաքակրթական, ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական համադրության վրա։

Ազգային կրթակարգը ձևավորվում է որպես հակադարձ մոդել այն գործընթացներին, որոնք հանգեցնում են հանրակրթության համակարգի քայքայմանը, և ուղղված է կրթության չորս հիմնասյուների վերականգնմանը՝ ինքնություն, հասանելիություն, կառավարելիություն և որակ։ Առաջարկվող մոդելի համառոտ և խտացված ներկայացման համար առաջարկում ենք հետևյալ շերտերի դիտարկումը.

<u>1. Բովանդակային վերակառուցում. ինքնության համակարգի վերականգնում։</u>

Ազգային կրթակարգի հիմքում դրվում է կրթության բովանդակության վերաիմաստավորումը՝ որպես ազգային ինքնության վերարտադրության առանցքային գործիք։ Կրթության բովանդակությունը կառուցվում է երեք շերտերի համադրմամբ.

- ազգային-քաղաքակրթական հիմք (լեզու, պատմություն, մշակույթ),
- գիտական-ակադեմիական գիտելիք,
- կիրառական և ժամանակակից հմտություններ։

Այս մոդելը թույլ է տալիս հաղթահարել երկու ծայրահեղությունները՝ մի կողմից՝ զուտ ինֆորմացիոն կրթությունը, մյուս կողմից՝ արմատներից կտրված գլոբալիստական մոտեցումները։

Բովանդակային քաղաքականության առանցքային սկզբունքն է՝ համաշխարհայինի ինտեգրում՝ ազգայինի պահպանմամբ, ոչ թե փոխարինմամբ։

Այսպիսով, կրթությունը դադարում է լինել միայն գիտելիքի փոխանցման մեխանիզմ և վերածվում է ինքնության ձևավորման համակարգի։

<u>2. Տարածական վերակազմավորում. կրթության հասանելիության ապահովում</u>

---

[7] «Ազգային կրթակարգ» ամբողջական փաստաթուղթը հասնելի է «Ազգային կրթության խորհրդի» կայքում՝ https://donation--donation-mitq.asia-east1.hosted.app/

Ազգային կրթակարգում կրթական համակարգը դիտարկվում է ոչ միայն սոցիալական, այլև տարածքային և անվտանգային ինստիտուտ։ Դպրոցը սահմանվում է որպես՝

- համայնքային կյանքի կենտրոն,
- պետական ներկայության կրող,
- տարածքային կայունության գործոն։

Այս մոտեցումը ենթադրում է դպրոցների ցանցի պահպանում՝ հատկապես սահմանամերձ և գյուղական բնակավայրերում, կրթության հասանելիության հավասարեցում, ճկուն կազմակերպչական մոդելների կիրառում (հեռավար կրթություն, համակցված դասարաններ, շարժական ուսուցիչներ)։

Տարածական քաղաքականության նպատակը ոչ միայն կրթության ապահովումն է, այլ նաև ժողովրդագրական և տարածքային կայունության պահպանումը։

<u>3. Ինստիտուցիոնալ վերակառուցում. կառավարման կայուն մոդել</u>

Կրթական համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է կառավարման մոդելից։

Ազգային կրթակարգը նախատեսում է կառավարման համակարգի վերափոխում՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

- թափանցիկություն և հաշվետվողականություն,
- մասնագիտական անկախություն,
- քաղաքական ազդեցության սահմանափակում,
- ապակենտրոնացում և տեղային ինքնավարություն։

Տնօրենների ընտրության և կառավարման մեխանիզմները կառուցվում են մասնագիտական գնահատման վրա՝ բացառելով կամայականությունը և ապահովելով համակարգի կայունությունը։

Արդյունքում կրթական համակարգը վերածվում է կառավարվող և կանխատեսելի ինստիտուտի, ոչ թե անկայուն վարչական դաշտի։

<u>4. Մասնագիտական վերափոխում. ուսուցչի համակարգի ուժեղացում</u>

Ազգային կրթակարգում ուսուցիչը դիտարկվում է որպես կրթական համակարգի առանցքային սուբյեկտ և արժեքային կրող։

Ներդրվում է «Ազգային ուսուցիչ» ինստիտուտը, որը ներառում է.

- բարձր մասնագիտական և արժեքային չափանիշներ,
- շարունակական մասնագիտական զարգացում,
- սոցիալական և մասնագիտական բարձր կարգավիճակ։

Գնահատման համակարգը վերափոխվում է՝ հրաժարվելով զտող մեխանիզմներից, անցնելով զարգացնող գնահատման մոդելի։

Այս մոտեցումը ապահովում է ոչ միայն կրթության որակի բարձրացում, այլ նաև մարդկային կապիտալի կայուն զարգացում։

5. Համակարգային ինտեգրում և ազդեցության մեխանիզմ

Ազգային կրթակարգի չորս բաղադրիչները գործում են ոչ թե առանձին, այլ որպես փոխկապակցված համակարգ։

- բովանդակությունը ձևավորում է արժեքային հիմքը,
- տարածական կառուցվածքը ապահովում է հասանելիությունը,
- կառավարման մոդելը՝ կայունությունը,
- մասնագիտական համակարգը՝ որակը։

Այս փոխազդեցությունը ձևավորում է փակ, բայց կառուցողական համակարգային շղթա, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ ուժեղացնում է մյուսներին։

Արդյունքում հանրակրթական համակարգը վերականգնում է իր հիմնական գործառույթները և վերածվում է ազգային զարգացման, սոցիալական կայունության և անվտանգության հիմնասյան։

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ Ազգային կրթակարգը ներկայացնում է համակարգային այլընտրանք, որը հակադրում է դեգրադացիոն մոդելին կառուցողական, կայուն և արժեքահենք մոտեցում։ Այն հռչակում է՝

- Ազգային քաղաքակրթական հենքով հանրակրթության բովանդակության անհրաժեշտությունը՝ «Արարատյան մարդու» գերնպատակը՝ առաքինի, արարող, հայրենատեր մարդու ձևավորում, ով ապրում է պարտականություն-վաստակ-իրավունք սկզբունքով։ Սա հակակշիռ է «գլոբալ քաղաքացու» արմատազուրկ կերպարին։
- «Ազգային ուսուցչի» ինստիտուտի ձևավորումը՝ ոչ միայն գիտելիք փոխանցող, այլ արժեքակիր, սոցիալական պատասխանատվություն կրող, հոգեբանական և մանկավարժական բարձր որակավորում ունեցող մասնագետ։ Նրա կարգավիճակը սոցիալական հեղինակություն է, ոչ թե վարչական պարզ ստորաբաժանում։
- Կրթության ապակենտրոնացում և թափանցիկություն՝ տնօրենների ընտրությանը մասնակցում են տեղական ինքնակառավարման մարմինները, դպրոցական խորհուրդները, ծնողները. մասնագիտական հանձնաժողովների կազմը և արձանագրությունները հրապարակային են։
- Գյուղական, սահմանամերձ և լեռնային դպրոցների պահպանության պետական ռազմավարություն՝ նպատակային սուբսիդավորում, ճկուն մոդելներ (հեռավար ուսուցում, շրջիկ ուսուցիչ, տարիքային համալիր դասարաններ), տրանսպորտային աջակցություն։

Ներկա իշխանությունն իրականացրել է հանրակրթության համակարգի միտումնավոր ապակառուցում չորս ուղղություններով. ապազգայնացում, դպրոցների փակում, կառավարման քաոս, ատեստավորման ձախողում։ Այս քաղաքականությունը ազգային անվտանգությանը, ժողովրդագրական ներուժին, տնտեսությանը և մարդկային արժանապատվությանը հասցնում է անդառնալի վնաս։

«Ազգային կրթության խորհուրդը» կոչ է անում անհապաղ կասեցնել հանրակրթության միտումնավոր քայքայման գործընթացը:

«Այս քաղաքականությանը վերջ դնելը ոչ թե տեխնիկական բարեփոխում է, այլ ազգային գոյատևման հարց: «Ազգային կրթահամակարգի» ձևավորման հրամայականը ոչ միայն այլընտրանք է, այլև փրկության գոյության ճանապարհ:

Ամեն հետաձգված օր աշխատում է հակառակորդի օգտին: Մենք կոչ ենք անում բոլոր հայրենակիցներին, անկախ քաղաքական հայացքներից, համախմբվել հանուն ազգային դպրոցի, հայրենասեր սերնդի և կենսունակ սահմանների պահպանության:»